ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08

ք.Երևան « 03 » « 03 » 2017 թ.

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գ. Ներսիսյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և "ԷյԲիՍիԴոմեն" ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գրիգորի Սաղյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցային էջերի հոսթինգի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները չօգտագործել որպես միջանցիկ (proxy) սերվեր:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կատարողը սառեցնում է սույն պայմանագրով նախատեսված ծառայություն(ներ)ի մատուցումը՝ պահպանելով կայքի տվյալները վճարման վերջնաժամկետից հաշված 40 օրացուցային օր:

2.3.3. Դադարեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Խոչընդոտող գործոն է համարվում՝ Պատվիրատուի կամ երրորդ կողմի Պատվիրատուի ծրագրի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակման իրականացնումը, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի

2.3.4. աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը: Զանգվածային տեղեկատվության փոխանակում է հանդիսանում, մասնավորապես, սակայն չսահմանափակված, միևնույն էլեկտրոնային հասցեից 10 և ավելի այլ էլեկտրոնային հասցեներին նամակների անդադար ուղարկումը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դադարեցման օրից հաշված 6 ամիս իր պահեստային շտեմարանում պահպանել Պատվիրատուի կայքում առկա տեղեկատվությունը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է մատակարարման ժամկետի խախտում:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **80300 (ութսուն հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Սույն պայմանագրի 2.3.3 կետով սահմանված տեղեկատվության փոխանակման հետևանքով Պատվիրատուի մեղքով անձանց պատճառված վնասների համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի (գործունեության հասցեի), էլ.փոստի, հեռախոսահամարի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են հինգ աշխատանքային օրվա ընթացքում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

7.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, ,Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասինե ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածներ 1; 2; 3 և 3.1 հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ	**«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»ՊՀ**
Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 51	Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Գործունեության հասցե՝ ք.Երևան, Իսահակյան 28	Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Հեռախոս՝ +374 60 27 00 27, ֆաքս՝ +374 60 27 00 60	Հեռախոս՝ 091799743, էլ. փոստ՝ info@cep.am,
էլ. փոստ՝ info@internet.am	ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Հ/Հ 900011064087
Հ/Հ՝ 1570020918560100	ՀՎՀՀ՝ 01573524
ՀՎՀՀ՝ 01561302	**Տնօրենի ժ/պ՝ Գ. Ներսիսյան**
Տնօրեն՝ Գրիգորի Սաղյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
« 03 » « 03 » 2017թ. կնքված
N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հնարավորությունները	
Դոմենի անունը	**epiu.am (փաթեթ London)**
Օպերացիոն համակարգ	LINUX (CPanel)
Ամսական տրաֆիկ	10 ՏԲ
Տրամադրվող տարածք	5000 Մբ
Էլեկտրոնային փոստի հասցեներ	150
1 ժամվա ընթացքում ուղարկվող նամակների թույլատրելի առավելագույն քանակ	200
FTP հասցե	30
DNS սատարում (support)	+
Երրորդ մակարդակի դոմեններ (Subdomain)	150
Տվյալների MySQL բազա	10
Կայանած դոմեն (Parked domain)	7
Կցված դոմեն (Addon domain)	5
Ամենօրյա պահեստավորում	+
Շաբաթական պահեստավորում	+
Ամսական պահեստավորում	+
Այցելությունների վիճակագրություն	+
Տեխնիկական ցուցումներ	
Ղեկավարման վահանակի հասցե	epiu.am /cpanel
Էլեկտրոնային փոստի հասցե	epiu.am /webmail
Առաջնային DNS հասցե	ns8.host.am
Երկրորդային DNS հասցե	ns3.host.am
Նշանաբառ	epiuam
Ծառայության մատուցման սկիզբը	**2017 թվականի հունվարի 1**
Ծառայության մատուցման ավարտը	**2017 թվականի դեկտեմբերի 25**
Դոմենի անունը	**cep.am (փաթեթ Amsterdam)**
Օպերացիոն համակարգ	LINUX (CPanel)
Ամսական տրաֆիկ	ԱՆՍԱՀՄԱՆ
Տրամադրվող տարածք	300 Մբ
էլ. հասցե	20
FTP հասցե	1
Տվյալների բազա (DBs)	✗
PHP	✓
Ենթադոմեններ	✗
Պահեստավորում	✓
Կայանած դոմեններ (Parked Domains)	✗
Կցված դոմեններ (Addon domains)	✗
Կայքի վերահասցեավորում (HTTP redirect)	✗
էլ. հասցեի վերահասցեավորում (E-mail forwarding)	✗

Տեխնիկական ցուցումներ	
Ղեկավարման վահանակի հասցե	cep.am /cpanel
Էլեկտրոնային փոստի հասցե	cep.am/webmail
Առաջնային DNS հասցե	ns6.host.am
Երկրորդային DNS հասցե	ns3.host.am
Նշանաբառ	cepam
Ծառայության մատուցման սկիզբը	**2017 թվականի հունվարի 1**
Ծառայության մատուցման ավարտը	**2017 թվականի դեկտեմբերի 25**

ԿԱՏԱՐՈՂ

«ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 51
Գործունեության հասցե՝ ք.Երևան, Իսահակյան 28
Հեռախոս՝ +374 60 27 00 27, ֆաքս՝ +374 60 27 00 60
էլ. փոստ՝ info@internet.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020918560100
ՀՎՀՀ՝ 01561302
Տնօրեն՝ Գրիգորի Սաղյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»ՊՀ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Հեռախոս՝ 091799743, էլ. փոստ՝ info@cep.am,
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011064087
ՀՎՀՀ՝ 01573524
Տնօրենի ժ/պ՝ Գ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №2
« 03 » « 03 » 2017թ. կնքված
N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից, ընդ որում (ըստ ամիսների աճողական կարգով)՝												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Համացանցային էջերի հոսթինգի ծառայություններ	-	-	7300	14600	21900	29200	36500	43800	51100	58400	65700	80300	**80300**

ԿԱՏԱՐՈՂ

«ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 51
Գործունեության հասցե՝ ք.Երևան, Իսահակյան 28
Հեռախոս՝ +374 60 27 00 27, ֆաքս՝ +374 60 27 00 60
էլ. փոստ՝ info@internet.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020918560100
ՀՎՀՀ՝ 01561302
Տնօրեն՝ Գրիգորի Սաղյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»ՊՀ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129
Հեռախոս՝ 091799743, էլ. փոստ՝ info@cep.am,
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011064087
ՀՎՀՀ՝ 01573524
Տնօրենի ժ/պ՝ Գ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №3
«_03_ «_03_» 2017թ. կնքված
N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08 պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ
Երևան, Մաշտոցի 51,
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020918560100
ՀՎՀՀ՝ 01561302

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
"Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011064087
ՀՎՀՀ 01573524

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 03 « 03 »2017թ.
Պայմանագրի համարը՝ N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08
Պատվիրատու՝ ի դեմս դեմս ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «Բյուջետային ծրագրերի իրականացման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Թովմասյանի, և Պայմանագրի կողմն՝ ի դեմս "ԷյԲիՍիԴոմեն" ՍՊԸ-ի տնօրեն Գրիգորի Սաղյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « « « 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«_03_«_03_» 2017թ. կնքված
N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08 պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և "ԷյԲիՍիԴոմեն" ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «_03_«_03_»2017 թվականին կնքված *N ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/08* գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____«_____»2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն